

## Առնակ Սարգսյան

### ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ.

*Քանալի բառեր* - Երիտասարդության մասնակցություն, սոցիալականացում, համակարգված երիտասարդական քաղաքականություն, երիտասարդական հասարակական կազմակերպություն, ռազմահայրենասիրական դաստիարակություն:

Երիտասարդությունը՝ որպես պետության ռազմավարական ներուժ, բացառիկ դեր ունի Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կայուն զարգացման, ժողովրդի արժանավայել կյանքի ապահովման, գենոֆոնդի պահպանման ու հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման գործում: Երիտասարդության ու պետության միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով, որպես պետության ներքին քաղաքականության բաղադրիչ, մշակվում և իրականացվում է երիտասարդական պետական քաղաքականություն:

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) սահմանում է այն հիմնական դրույթները, որոնց հիման վրա մշակվում ու իրականացվում է երիտասարդական պետական քաղաքականությունը ՀՀ-ում<sup>1</sup>: Սակայն պետական կառավարման ոլորտում գործնական քայլ արվեց 1995 թ., երբ ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմում հիմնվեց երիտասարդության հարցերի վարչություն: 2002 թ. երիտասարդության հարցերի վարչությունը վերածնակվորվեց երիտասարդական քաղաքականության վարչության<sup>2</sup>: Այս փոփոխությունն, ըստ էության, արտահայտում է ավելի քան 20 տարիների զարգացումն ու էվոլյուցիան՝ «երիտասարդական հարցերից» դեպի «երիտասարդական քաղաքականություն»: ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման լիազոր մարմինը 2007 թ. հունիսից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է, որի աշխատակազմ է տեղափոխվել երիտասարդական քաղաքականության վարչությունը<sup>3</sup>:

Երիտասարդական պետական քաղաքականությունը ՀՀ պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և ունի ռազմավարական նշանակություն: Երիտասարդական պետական քաղաքականությունը կոչված է ստեղծելու իրավական, տնտեսական և կազմակերպչական պայմաններ երիտասարդության համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար: Երիտասարդական պետական քաղաքականությունը առաջնահերթությունների, ծրագրերի, միջոցառումների և մեխանիզմների համակարգ է, որն ուղղված է երիտասարդության մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը՝ նպաստելու համար ՀՀ ազգային անվտանգության ամրապնդմանը, սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացմանը<sup>4</sup>:

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում հիմնարար փաստաթուղթ է, որով սահմանվում են ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, երկարաժամկետ կտրվածքով (2015-2025 թթ.) ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության նպատակը, խնդիրները, սկզբունքները և ուղղությունները:

Երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտներն են՝

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ». հավելված ՀՀ կառավարության 2014 դեկտեմբերի 25-ի նիստի №54 արձանագրային որոշման, էջ 1:

<sup>2</sup> Տե՛մս «Հայաստանի երիտասարդական ազգային գեկույց», Ե., 2007, էջ 21:

<sup>3</sup> Տե՛մս նույն տեղում, էջ 21:

<sup>4</sup> «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», էջ 2:

1) **Երիտասարդ՝ ՀՀ 16-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև ՀՀ-ում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 16-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում.**

2) **Երիտասարդ ընտանիք՝** ընտանիք, որտեղ ամուսիններից առնվազն մեկը երիտասարդ է՝ 16-30 տարեկան (ներառյալ), իսկ մյուսի տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ), և ամուսինների գումարային տարիքը չի գերազանցում 65-ը կամ երեխա ունեցող երիտասարդ միայնակ ծնող.

3) **Երիտասարդական հասարակական կազմակերպություն՝** ՀՀ-ում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, զբաղվում են երիտասարդության հարցերով և իրականացնում են երիտասարդական աշխատանք<sup>1</sup>:

ՀՀ երիտասարդական քաղաքականության ձևավորման առաջին իսկ տարիներից ՀՀ երիտասարդական հարցերով զբաղվող պետական մարմինների առաջնայնություններից է երիտասարդական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունների խթանումը և նրանց մասնակցությունը երիտասարդական քաղաքականության իրականացման բոլոր փուլերում: Պետք է նշենք, որ այդ միջոցների ծավալները 1997 թ. 37 մլն դրամից 2009 թ. հասել են 411 մլն դրամի<sup>2</sup>: 2009 թ. իրականացված դրամաշնորհային համակարգի աշխատանքների գնահատման գործընթացը, իրականացված ծրագրերի քանակին, որակին և արդյունավետությանը, բարձր գնահատական տալով հանդերձ, վեր է հանել նաև մի շարք խնդիրներ, որոնցից առավել արդիական էր դրամաշնորհների ներկայացման գնահատման և վերահսկման համակարգերի ոչ բավարար թափանցիկությունը և հրապարակայնության թերի ապահովումը: Այս բացերի վերացման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2009 թ. վերջին ձեռնարկեց առցանց դրամաշնորհային համակարգի մշակման և գործարկման աշխատանքները<sup>3</sup>: Առցանց համակարգը երիտասարդական կազմակերպություններին հնարավորություն է տալիս գրանցվել կայքում և հավակնել պետական դրամաշնորհների: Համակարգը թույլ է տալիս առավել թափանցիկ և հրապարակային դարձնել պետական աջակցությունը երիտասարդական կազմակերպություններին և բարձրացնել գործընթացի արդյունավետությունը: Ծրագրերի սեղմագրերը, ինչպես նաև զեկույցները ամբողջությամբ բաց են կայքի այցելուների համար, ինչը նույնպես կնպաստի իրականացվող ծրագրերի որակի բարձրացմանը և գործընթացի հրապարակայնությանը<sup>4</sup>:

4) **Երիտասարդական աշխատող՝** անձ, որն իրականացնում է երիտասարդական աշխատանք (երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը)՝ նպաստելու երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին, զարգացնելու նրանց ներուժը և օգնելու երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ: Երիտասարդությունը մարդկային կյանքի էական ժամանակահատվածներից մեկն է, եթե ոչ ամենաէականը աշխատանքային կարիերայի հիմքերը դնելու առումով: Այս ընթացքում երիտասարդները նախանշում են իրենց ձգտումներն ու կյանքի նպատակները, իրենց ուրույն դերերն ու պատասխանատվություններն են փնտրում և գտնում հասարակության մեջ և ձգտում են հասնել տնտեսական անկախության: Սա նշանակում է, որ երիտասարդությունը սոցիալական և հոգեբանական անցումների ժամանակաշրջան է, երբ երիտասարդները պետք է կարևոր որոշումներ կայացնեն և ընտրություններ կատարեն, որոնք էապես ազդում են իրենց կյանքի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 2-3:

<sup>2</sup> <http://cragrer.am/node/55> (առցանց դրամաշնորհային համակարգ):

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս <http://erit.am/programs/>.

ընթացքի վրա<sup>1</sup>:

Երիտասարդական աշխատողը իրագել է երիտասարդության իրական կյանքին, նրա տեղական պայմաններին, կարող է գնահատել իրավիճակը և երիտասարդ մարդկանց կարիքները, ընտրել և կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ, իրականացնել կատարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն: Աշխատում է երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ: Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Սա իր մեջ ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական և քաղաքական տիպի միջոցառումներ: Սրանք հիմնականում դպրոցից դուրս իրականացվող միջոցառումներ են, որոնք կրում են հաճախ ոչ ֆորմալ բնույթ: Երիտասարդական աշխատանքի հիմնական խնդիրն է երիտասարդների համար իրենց ապագան կերտելու հնարավորությունների ստեղծումը: Երիտասարդական աշխատանքը տարբեր ձևաչափեր ու բովանդակություն կարող է ունենալ սկսած ակումբային գործունեությունից, երիտասարդական կենտրոններից, փողոցում անմիջականորեն չկազմակերպված երիտասարդության հետ աշխատանքից, սպորտային միջոցառումներից, մինչև սոցիալական ձեռներեցություն, քաղաքացիական ակտիվիզմ, ժամանցի կազմակերպում և այլն<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ վերջին զարգացումների ֆոնի վրա հաճախ առաջարկվում է ԵԱ-ի (երիտասարդական աշխատանք) հիմնական երկու ընդհանրական սկզբունքային նպատակ, որը նաև արտացոլվում է ոլորտի բնութագրման մեջ: Դրանք են երիտասարդների անհատական կարողությունների զարգացման, ինքնավստահության, հասարակական կյանքում ակտիվության աջակցումը (facilitating youth agency) և կյանքում կողմնորոշվելու ունակությունների զարգացումը (navigational capacities)<sup>3</sup>:

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն) մշակվել է՝ հիմնվելով ՀՀ երիտասարդության ազգային զեկույցի 1-ին՝ հետազոտական մասի, ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի միջև 2011 թ. կնքված համագործակցության հուշագրով իրականացված ՀՀ երիտասարդների ձգտումների և ակնկալիքների համապարփակ ուսումնասիրության, ինչպես նաև դրանց համեմատական վերլուծության՝ ՀՀ երիտասարդության ազգային զեկույցի երկրորդ (վերլուծական) մասի վրա<sup>4</sup>:

ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի № 1693-Ն որոշմամբ հաստատված «2013-2017 թթ. երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության» գերակայություններ են՝

1. քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացի խթանում,
2. երիտասարդների սոցիալ-տնտեսական և զբաղվածության հիմնախնդիրների լուծում,
3. երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում,

<sup>1</sup> Ն. Սերիեր. «Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա». աշխատանքի միջազգային գրասենյակի զբաղվածության քաղաքականության բաժին, Ժնև, 2014:

<sup>2</sup> «Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ»: Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն, ավարտուն զեկույց, վերլուծություններ և առաջարկություններ, 2015, էջ 27-28:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 28:

<sup>4</sup> «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի № 1693-Ն որոշումը. Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը հավանություն տալու մասին». հավելված № 1, էջ 1:

4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմա-հայրենասիրական դաստիարակություն,

5. Կրթության շարունակականություն և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիություն<sup>1</sup>:

Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանվել են՝ հիմք ընդունելով 2012-2014 թթ. ՀՀ Երիտասարդության շրջանում անցկացրած հետազոտությունները, մասնավորապես «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը<sup>2</sup>», «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույցը<sup>3</sup>, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում գործող «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի<sup>4</sup> կողմից իրականացվող պարբերական նպատակային հետազոտությունների արդյունքում արձանագրված ՀՀ երիտասարդների հիմնախնդիրները: Այսպիսով՝ 2015-2025 թթ. երիտասարդական պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1. ՀՀ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության խթանում,

2. Երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակում<sup>5</sup>:

Երիտասարդությունը մարդկային կյանքի էական ժամանակահատվածներից մեկն է, երբ երիտասարդները սկսում են հասկանալ իրենց ձգտումները, ստանձնում իրենց տնտեսական անկախությունը և իրենց տեղը գտնում հասարակության մեջ: Աշխատատեղերի համաշխարհային ձգնաժամը խորացրել է երիտասարդների խոցելիությունը հետևյալ առումներով՝

ա) գործազրկության ավելի բարձր մակարդակ,

բ) ցածր որակի աշխատանք նրանց համար, ովքեր աշխատանք են գտնում,

գ) աշխատաշուկայի ավելի մեծ անհավասարություն երիտասարդների տարբեր խմբերի միջև,

դ) դպրոցից աշխատանքի ավելի երկար ու ավելի վտանգավոր անցումներ,

ե) աշխատաշուկայից անջատվածության աճ<sup>6</sup>:

ԱՄԿ-ի (Աշխատանքի միջազգային կազմակերպություն) 2012 թ. հունիսին կայացած կոնֆերանսի ժամանակ որոշում կայացվեց հրատապ գործողություններ ձեռնարկել՝ երիտասարդների անախադես աշխատանքային ձգնաժամի խնդիրը լուծելու նպատակով: «Երիտասարդների զբաղվածության ձգնաժամ. գործողություններ իրականացնելու կոչ» վերտառությամբ հռչակագիրը ներառում է եզրակացությունների մի փաթեթ, որոնք իրենցից ներկայացնում են երիտասարդների զբաղվածության ազգային ռազմավարությունների ձևավորման նախագիծ<sup>7</sup>: Այն կոչ է անում բազմակողմանի համակարգի միջոցով ավելացնել քաղաքականությունների և գործողությունների ներդաշնակությունը երիտասարդության զբաղվածության ոլորտում: Որպես այս օրակարգի մի մաս, ՄԱԿ-ը մշակել է ամբողջ համակարգի մասշտաբով երիտասարդության հարցերով գործողությունների ծրագիր, որի հիմնական առաջնահերթություններից մեկը երիտասարդների զբաղվածությունն է՝ նպատակաուղղված

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 6-7:

<sup>2</sup> «Հայաստանի երիտասարդական ազգային զեկույց», Ե., 2011:

<sup>3</sup> "National youth aspirations research report . RA Ministry of Sport and Youth Affairs. United Nations Development Program, Armenia". Yerevan, 2012.

<sup>4</sup> <http://www.msy.am> (Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն)

<sup>5</sup> «ՀՀ կառավարության 2014 դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշում. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ» էջ 5:

<sup>6</sup> «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն». Ե., 2013: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն: [Online] Available from <http://www.minsportyouth.am/files/post/1463655073-2.pdf>, [Accessed 03.11.2016].

<sup>7</sup> «2012թ. երիտասարդների զբաղվածության ձգնաժամ. գործողություններ իրականացնելու կոչ» հռչակագրի լրիվ տեքստը կարելի է գտնել ԱՄԿ վեբ կայքում

[http://www.ilo.org/ilc/ILCSessions/101stSession/textsadopted/WCMS\\_185950/lang-en/index.htm](http://www.ilo.org/ilc/ILCSessions/101stSession/textsadopted/WCMS_185950/lang-en/index.htm)

ՄԱԿ-ի ողջ համակարգում երիտասարդական ծրագրերի ամրապնդմանը<sup>1</sup>:

ՀՀ-ում երիտասարդական քաղաքականության վրա էական ազդեցություն ունեն նաև ՄԱԿ-ի կազմում գործող գործակալությունները՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը, ՄԱԿ-ի գարգացման ծրագիրը:

Ընդունելով ՄԱԿ-ի՝ երեխաներին նվիրված հատուկ նիստը եզրափակող սույն փաստաթուղթը [«Աշխարհը երեխաների համար (ԱԵՀ)» բանաձևը]<sup>2</sup> պետությունները հանձնառություն են վերցրել երիտասարդների մասնակցությունը ակտիվացնելու ուղղությամբ: Բազմաթիվ այլ միջազգային կազմակերպություններ իրենց առաջնահերթություններում մշտապես ներառում են երիտասարդության բաղադրիչը ինչպես, օրինակ, «Ժողովրդավարության ազգային ինստիտուտը» (NDI), «Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը» (OSCE), «Բաց հասարակության ինստիտուտը» (OSI), «Վորլդ Վիժն Հայաստանը» «Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը» (GTZ), «Եվրասիա համագործակցության հիմնադրամը» և այլն:

Պաշտոնապես գրանցված տվյալներով՝ Հայաստանում երիտասարդների միայն 29%-ն է զբաղված: Հաշվի առնելով այն իրողությունները, որ կյանքի այս ժամանակահատվածը մասնագիտական կրթություն ստանալու շրջան է, և ոչ միշտ է, որ համատեղվում են ուսումնառումը, աշխատանքը, փաստենք, որ 20-24 տարեկան երիտասարդների միայն 35%-ն է զբաղված, իսկ 25-29 տարեկան երիտասարդների՝ 52%-ը<sup>3</sup>: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմում երիտասարդների հիմնահարցերով զբաղվում է միայն Երիտասարդական քաղաքականության վարչությունը, որի գործունեությունն ուղղված է երիտասարդական քաղաքականության մշակման աշխատանքների և պետության կողմից երիտասարդական ծրագրերի իրականացման կազմակերպմանը:

2013-2017 թթ. երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության մեջ որպես գերակա խնդիր առանձնացված է երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրը, որի շրջանակում նախատեսվում է լուծել երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և ձեռներեցության խթանման աշխատանքները, կարիերայի կենտրոնների հետ համագործակցությունը, մարզային երիտասարդների զբաղվածության խթանումը և այլն: Այս խնդիրների լուծման նպատակով իրականացվում են համագործակցային աշխատանքներ, երիտասարդների համար կազմակերպվում են ամենամյա ուսուցողական դասընթացներ և աշխատանքի տոնավաճառներ, սակայն նախարարությունում, որպես այդպիսին, չկա երիտասարդների զբաղվածության հիմնախնդրով զբաղվող առանձին մարմին:

Համաձայն ՀՀ կառավարության կողմից 2012 թ. մշակված ՀՀ զբաղվածության 2013-2018 թթ. ռազմավարության՝ որպես քաղաքականության հիմնական ուղղություն կարևորվում է աշխատաշուկա-կրթական համակարգ կապի ապահովումը: Այս ուսումնասիրության մեջ մասնավորապես հաշվի են առնվել հետևյալ 3 հիմնական ուղղությունները<sup>4</sup>.

ա) աշխատաշուկայի միտումների և կանխատեսումների հենքի վրա հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերի ձևավորման նոր մեխանիզմների ներդրում,

բ) որակավորումների ազգային շրջանակի սահմանման հետևյալ ամբողջական մեխանիզմի ապահովում՝ զբաղմունքների դասակարգիչ-մասնագիտությունների բնութագրեր-կրթական, չափորոշիչներ-կրթական ծրագրեր, որի իրականացման արդյունքներով նաև՝ կրթական որակի համալիր գնահատում,

<sup>1</sup> www.unicef.org

<sup>2</sup> Ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից՝ 2002թ. հոկտեմբերի 11-ին: "Resolution. A world fit for children". Available at: www.unicef.org

<sup>3</sup> ՀՀ ԱԿԾ տվյալներ՝ <http://www.armstat.am/endoc/99471438.pdf>

<sup>4</sup> «Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 ռազմավարություն», էջ 32:

զ) մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրում, որը պետք է հասու լինի հանրակրթությունից սկսած և զբաղվածության կարգավիճակի, մասնագիտական կարիերայի բոլոր փուլերում:

3. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում:

Առանձնակի կարևոր է երիտասարդության շրջանում առողջության և սպորտի՝ որպես կենսական արժեքների քարոզչությունը, ինչպես նաև առողջ ապրելակերպի խթանմանը նպաստող պայմանների ստեղծումը<sup>1</sup>:

Առողջ ապրելակերպի կարևոր բաղադրիչներից է վերարտադրողական առողջությունը, որին առնչվող հիմնախնդիրներից են սեռական դաստիարակության անբավարար մակարդակը, սեռավարակների տարածվածությունը, անպտղությունը և այլն, որոնք ոչ միայն առողջապահական խնդիրներ են, այլև մեծապես առնչվում են ժողովրդագրական անվտանգությանը: Ուստի կարևորվում է պետական համալիր ծրագրերի և միջոցառումների իրականացումը:

4. Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն:

Այս առումով կարևորվում են հոգևոր դաստիարակչական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև երիտասարդների շրջանում ազգային արժեքների պահպանմանն ու հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացումը: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ որպես երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացման և հայրենասիրական դաստիարակության առանձին ուղղություն, իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Հարցումների համաձայն՝ երիտասարդները հանդուրժողականության բարձր աստիճան են ցուցաբերում հայ հասարակության մեջ արտասահմանցիների ներկայության նկատմամբ: Միևնույն ժամանակ այնքան էլ բարձր չէ երիտասարդների հետաքրքրությունն այլ ազգերի մշակույթներով<sup>2</sup>:

5. Ընտանեկան արժեքների պահպանում և զարգացում:

Կարևորելով ընտանիքի դերը պետության և հասարակության զարգացման գործընթացներում և ելնելով այն հանգամանքից, որ ազգային գենոֆոնդի պահպանումը, նոր սերնդի հոգևոր և ֆիզիկական զարգացումը կախված են երիտասարդ ամուսինների առողջական, սոցիալ-տնտեսական ու կենցաղային պայմաններից, նրանց ընտանիքում համերաշխությունից և շրջապատող բնական ու հասարակական միջավայրից՝ պետությունը երիտասարդ ընտանիքների համար նախատեսում է բազմաբնույթ օժանդակություն՝ բնակարանային հիմնախնդրի լուծման (բնակարանային շինարարություն, մատչելի հիպոտեկային վարկերի տրամադրում և այլն<sup>3</sup>), ուսման, բժշկական օգնության և այլ կարիքների համար, ինչպես նաև ծնելիության խթանման ծրագրեր:

6. Կրթության շարունակականությունը և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիությունը:

Արագ փոփոխվող աշխարհում, որտեղ անընդհատ ծնվում են նոր գիտելիքներ և նորարարական գաղափարներ, կիրառության մեջ են մտնում նորագույն տեխնոլոգիաներ, այդ ամենին տիրապետելու և մրցունակ լինելու համար անհրաժեշտություն է դառնում շարունակական կրթությունը, որի ապահովման հիմնական ձևերից է նաև ոչ ֆորմալ կրթությունը: Արդիական է կրթության ճանաչելիության խնդիրը:

Անկախության, ինքնաիրացման և կենսական նշանակության պլանավորման հիմնախնդիրների համատեքստում կրթությունը շարունակում է մնալ նորանկախ Հայաստանի կարևորագույն ոլորտներից մեկը և երիտասարդների համար վեր է հանում կենսական նշանակության խնդիրներ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երի-

<sup>1</sup> «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի № 1693-Ն որոշում. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարություն. հավելված № 1, էջ 7-8:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>3</sup> «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիր: ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թ. № 98-Ն որոշում:

տասարդների ստացած գիտելիքները չեն երաշխավորում աշխատանք իրենց մասնագիտացման ոլորտում: Հովանավորչությունը մեծ դեր է խաղում աշխատանքի անցնելու և կարիերա կառուցելու հարցում, որն իր հերթին շարունակում է մեծացնել սոցիալական կախվածությունների և խնդիրները լուծելու թերզարգացած անձնական մեխանիզմների շրջանակը<sup>1</sup>:

Որպես կրթության յուրատեսակ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին, հատկապես երիտասարդներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին և պայմաններին համապատասխան հմտությունները, կարողությունները և գիտելիքները: Պետությունը կարևորում է ոչ ֆորմալ կրթության նշանակությունը, չափանիշների մշակման և ներդրման կարևորությունը և աջակցում է համապատասխան ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը<sup>2</sup>:

7. Աջակցություն միջազգային երիտասարդական համագործակցությանը և միջմշակութային երկխոսության զարգացմանը<sup>3</sup>:

Պետությունն պետք է աջակցի միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանը, երիտասարդական փոխանակումների և միջմշակութային երկխոսության հաստատման կամ զարգացման ծրագրերին, տարածաշրջանային և միջազգային մշակութային, կրթական, գիտատեխնիկական, երիտասարդական ծրագրերում ՀՀ երիտասարդության ներգրավմանը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ՀՀ, Արցախի Հանրապետության և Սփյուռքի երիտասարդների, երիտասարդական միավորումների միջև հոգևոր-մշակութային, գիտակրթական, սոցիալ-տնտեսական, հասարակական կապերի հաստատմանն ու զարգացմանը՝ դրանք համարելով պետական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

8. Երիտասարդների շարժունակության խրախուսում, հատուկ ծրագրերի մշակում և իրականացում<sup>4</sup>:

2012 թ. ՀՀ-ն երիտասարդական քարտի միջոցով երիտասարդների տեղաշարժի մասնակի համաձայնագրի անդամ է, որի շրջանակներում հանձն է առել աջակցել երիտասարդական շարժունակության ծրագրերի իրականացմանը: Երիտասարդական շարժունությունը դիտվում է որպես գործիք՝ խթանելու երիտասարդների անձնական և մշակութային զարգացումը՝ նպաստելով երիտասարդների մասնակցությանը և ոչ ֆորմալ կրթությանը: Երիտասարդության շարժունակության կենտրոնական խնդիրներից մեկն է երիտասարդների տարբեր խմբերի շրջանում հավասար հնարավորությունների ստեղծումը, երիտասարդներին առաջարկվող տարբեր ծառայությունների մատչելիության ապահովումը:

9. Հետազոտությունների միջոցով երիտասարդության տարբեր շերտերի կարիքների գնահատում և երիտասարդական քաղաքականությանն առնչվող իրավական դաշտի շարունակական կատարելագործում:

Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման նպատակով հետազոտությունների միջոցով երիտասարդության տարբեր շերտերի կարիքների գնահատումը ենթադրում է երիտասարդության խնդիրների խոր հետազոտություն՝ հիմնված ինովացիոն մեթոդների և համակարգված մոտեցման վրա: Առավել արդիական խնդիրների լուծումներն առաջարկելու համար երիտասարդների իրավունքների իրացման ուղղությամբ անհրաժեշտ է պարբերական մշտադիտարկում իրականացնել: Ներկայումս ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում գործում է Երիտասարդական ուսումնասիրությունների կենտրոնը, որն իրականացնում է երիտասարդության հիմնախնդիրների վերաբերյալ տարաբնույթ ուսումնասիրութ-

<sup>1</sup> «Անկախության սերունդ: Հետազոտություն երիտասարդների շրջանում»: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Ե., 2016, էջ 12:

<sup>2</sup> «Ոչ ֆորմալ կրթության մասին հայեցակարգ» ՀՀ կառավարության 2006 թ. դեկտեմբերի 14-ի № 50 որոշում, էջ 1-2:

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», էջ 9:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 10:

յուններ: Այդ ուսումնասիրությունների նպատակը առավել փաստարկված և արդյունավետ երիտասարդական պետական քաղաքականության մշակմանը նպաստելն է: Այս նպատակին հասնելու համար քաղաքականության մշակման գործընթացում անհրաժեշտ է ներգրավել երիտասարդական կազմակերպություններին և այն երիտասարդներին, որոնք իրենց դիտարկումներով և ոլորտում կատարած աշխատանքով կարող են մեծ ներդրում ունենալ տվյալ գործում<sup>1</sup>:

**Արնակ Սարգսյան, Ключевые вопросы участия молодежи в Республике Армении в 1995-2017 гг.,** - Молодежная политика постсоветской Армении регулируется с 1995 г., когда был создан отдел по делам молодежи в структуре Министерства культуры и по делам молодежи. Затем, правительство приняло Концепцию по молодежной политике в 1998 г., который является основным и единственным политическим документом по молодежной политике до сих пор. Национальная молодежная политика прошла ряд преобразований, последовавшие за социально-экономическими преобразованиями в республике. Важно отметить, что развитие молодежной политики всегда происходит параллельно с развитием молодежного сектора в целом и в большинстве случаев она была начата, разработана и мотивирована с МНКО сектором и студенческими организациями. Такая ситуация с гражданским и политическим участием создает серьезные проблемы, связанные с функционированием всех механизмов национальной молодежной политики, направленных на повышение уровня участия молодежи в процессе принятия решений. Таким образом, одним из главных целей национальной молодежной политики следует быть повышение доверия в национальной молодежной политике, в различных типах социального и политического участия, повысив их осведомленность в существующих механизмах и возможностях.

Безработица среди молодежи является одной из основных причин эмиграции. Тем не менее, создание рабочих мест для молодых людей являлось одним из основных приоритетов национальной молодежной политики на 2008-2012 годы. Она также является приоритетом для ряда правительственных и неправительственных проектов.

**Arnak Sargsyan, Key issues of youth participation in the Republic of Armenia in 1995-2017,** - The youth policy of post-Soviet Armenia has been regulated since 1995, when the Youth Affairs department was created in the structure of the Ministry of Culture and Youth Affairs. Then, the Government established a State Concept on youth policy in 1998, which is the main and only political document on youth policy till now. National Youth Policy has passed a series of transformations and developments following the socio-economic transformations of the Republic. It is important to note that the development of the youth policy was always going in hand with the development of youth sector in general and in most of the cases it was initiated, developed and motivated by and with the YNGO sector and student organizations. This situation with the civic and political participation creates serious problems with the functioning of all the National Youth Policy mechanisms aimed at raising the level of participation of youth in the decision making processes. So, one of the major aims of the National Youth Policy should be raising the young people's trust in the National Youth Policy, as well as in various types of social and political participation, rising their awareness on the available mechanisms and possibilities.

Youth unemployment is one of the main reasons of emigration. However, youth employment opportunities were one of the main priorities of the National Youth Policy for 2008-2012; it is also a priority for a number of governmental and non-governmental youth projects.

---

<sup>1</sup> Տե՛ս «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում»: Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն»; Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ: Հետազոտական գեկույց, Ե., 2014, էջ 6: